

ԲԱԺՆԵԳԻՆ

Տարեկան

100 Դրու

Վեցամսեայ

50 Դրու

Արտոն. եւ Պատ. Տնօրէն
ԲԻԹՐԻ ԳՈՒՑՈՒՄՃԵԱՆ

Խմբագիր՝
ԶԱԻՆ ԶԱԲԵԹԵԱՆ

Հասցէ
Greek P. O. Box 54

Հասը 5 Դր.



ՊԱՏՐԱՍ

V. KIBRISLIAN

ԿԻՍԱՄՍԵԱՅ ՕՐԿԱՆ ՀԱՅ ՊՈՅ-ՍԿԱՈՒՏՆԵՐՈՒ. ԻԶՄԻՐ

BADRASD

Organe des Boy-Scouts Arméniens
de SMYRNE

ΜΗΑΔΡΑΣΤ

ΟΡΓΑΝΟΝ ΤΩΝ ΑΡΜΕΝΙΩΝ ΠΡΟΣΚΟΠΩΝ
ΣΜΥΡΝΗΣ

ՆԵՐԿԱՅ ՄԱՆՈՒԿՆ Է ԱՊԱԳԱՅ ՄԱՐԴԷ

ABONNEMENT

Annuel

10 Frs.

Six-mensuel

5 Frs.

Direct. et Ger. Resp.
PETER COUYOUMDJIAN

Redacteur
ZAVEN HAPETIAN

Adresse
Greek P. O. Box 54

Հասը 5 Դր.



Կ. Պոլսոյ Հայ սկաուտները
բանակումի միջոցին

Les Boy-scouts Arméniens de Con-
stantinople prennent leurs thés
au camp

ՀԱՅԻ (կօլ-իբբր), ՄԻՋԲԱՆ (աջ համ-պէֆ), ՄԱՆՈՒԿ (պահեստի),
ՄԻՐՏԻՉ (կէս ձախ ծօրուօր), ՀԱՄԲԱՐՉՈՒՄ (կեղրոնի համ-պէֆ),
ԽՈՐԷՆ (ձախ պէֆ), ՕՋԱՆ (ձախ ծօրուօր), ԶԱՐԵՋ (կէս աջ
ծօրուօր), ԱՊՐՈՒ (աջ ծօրուօր), ԿԱՐՈՒ (կեղրոնի ծօրուօր),
ԱՐՏԱՆ (ձախ համ-պէֆ) եւ ՊԵՐՈՒՄ (աջ պէֆ եւ խմբապէս):

Հայ ժողովուրդը կատարեալ վստահութիւն ունի Ձեր վերջնական
յաղթանակին վրայ: Պիտի կարենա՞ք ապացուցանել զայն
յառաջիկայ Կիրակի, խելով յաղթութեան դափնեպսակը:

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Կ. Պոլիս 27 Փետրվար 922

Պատ. ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

«ՊԱՏՐԱՍ»-ի

Իզմիր

Միշտ գովեստով խօսուիլը լսած
եմ Իզմիրի Հայ սկաուտական կազմա-
կերպութեան վրայ, նոյնիսկ անոնցմէ՝
որոնք իբր սկաուտ ապրած են Ձեր
կազմակերպութեան մէջ:

Որքա՞ն խորունկ պիտի ըլլար նաև

ուրախութիւնս՝ եթէ կարող ըլլայի
անձամբ համապում գոյացնել թէ սկա-
ուտական ներքին արժեք ունին Իզմիրի
Հայ սկաուտները: Բան մը որ կը վախ-
նամ թէ՛ կը պակսի յաճախ սկաուտ-
ներուն: Ամէն պարագայի մէջ կը սի-
րեմ հաւատալ թէ առ այդ կը ձգտին
ձեր ջանքերը ու այս հաւատքով Ձեզ
կը մատուցանեմ, իմ յարգանսց հետ,
անկեղծ մաղթանք՝ սկաուտական ի-
տէպէն իրականացմանը համար:

Յ. Թ. ՀԻՆԴԼԵԱՆ

ΥΠΟ ΤΗΝ ΓΕΝΙΚΗΝ ΑΡΧΗΓΙΑΝ ΤΗΣ Α. Μ. ΤΟΥ ΒΑΣΙΛΕΥΣ



ΣΩΜΑ ΕΛΛΗΝΩΝ ΠΡΟΣΚΟΠΩΝ

Արեւի 16 Փետրվար 922

ԻԶՄԻՐԻ ՀԱՅ ՍԿԱՈՒՏՆԵՐՈՒՆ,

Ամենամեծ շահախնդրութեամբ կը
կը հետեւիմ Հայ եղբայր պոյ-սկաուտ-
ներու ճշմարիտ յառաջդիմութեանց ու-
րոնց ապացոյցը կուտայ Ձեր օրկանը
ինչպէս նաև ուրիշ պաշտօնակիցներու
տեղեկութիւնները:

Չափազանց զոհ եմ ի տես այն
սերտ և անբախտելի եղբայրակցու-
թեան որ գոյութիւն ունի Հայ և Յուն
պոյ-սկաուտներու միջև: Մեր նախն-
եաց տառապանքներն ու երկար ըս-
տըրկական կեանքը, կարող են մեր
սկաուտներուն կորով պարգեւել, որ-
պէսզի անոնք մարմնով ու հոգեով զօ-
րաւոր ըլլան ու շարունակին իրենց
պապերուն նման ազատ շնչել Փօքր
Ասիոյ դաշտերուն մէջ:

Ընդունեցէք Հելլէն պոյ-սկաուտնե-
րու անկեղծ ողջոյնները: Լ. ԲիէրիՍ

ԽՄԲԱԴՐԱԿԱՆ

ԻՆՉ ԿՍՊԱՍՈՒԻ ՍԿԱՌԻՏԻԶՄԷՆ

Դարերու քաղաքակրթութեան պատմութիւնը լոյս կը սփռէ մարդկային անցեալ կեանքին վրայ, մեզ իրազեկ դարձնելով այն բոլոր վիճակներուն՝ որոնցմով ապրած է մարդը։ Ան՝ հոգեկան և մտաւոր զանազան յայտնակերտումները ցուցադրելէ անմիջապէս վերջ, որպէս հետեւութիւն և եզրակացութիւն մեզ կը պարզէ սա ճշմարտութիւնը թէ՛ մարդկութիւնը միշտ քաղաքակրթուելու, աստիճանաբար դէպի հոգեկան բարձրաշխարհը դիմելու ընդունակ է, և առայդ չէ դադրած և չի դադրիր ի գործ դնելէ լռելեայն ջանք մը՝ որ անոր հոգիին ազնիւ յատկութիւնը կը կազմէ։

Մարդիկ շատ անգամ գերար կոտորեալ են, մինչև այսօր ալ պակաս չէ այս դառն երեւոյթը. և ի՞նչ է ասոր պատճառը։ Շատ պարզ է այլևս, որ այս բոլոր չարիքին պատճառները ուրիշ բան չեն եթէ ոչ անձնական շահի և եսի խնդիրներ։

Բայց ինչ որ կ'ուզէինք ըսել սա՛ է թէ՛ այս կռիւները, այս միմիանց գերազանցելու փորձերն ցարգ եղած են բարեբար մարդկութեան համար, քաղաքակրթութեան համար, որովհետեւ կը տեսնուի որ՝ ինչ որ չար է ու կոպիտ, բարբարոսական, անիկայ կ'անհետանայ և կը մնայ արդարեւ այն որ պէտք էր ապրել, ան որ սաղմն էր նորանոր փթթումներու և կատարելագործութեանց։ Ընդհանուր աշխարհի մէջ ճիշդ մը կայ բառնալու արիւնալից կըռիւնները, Քրիստոնէութեան «մարդիկ եղբայր եմ» վարդապետութիւնն, կարծես բնաբան ունենալով և ճշմարիտ է այս՝ այնքան ուտե՛ն որ մարդիկ կարենան միեւնոյն կերպ խորհիլ, միեւնոյն կերպ գործել և չ'նախանձին ուրիշի մը ունեցածին՝ որ շատ անգամ թերեւ իրենցինքն ունեցածէն ալ պակաս է։

Ընդհ. աշխատանքի խիզախ և խիստ օրէնք, նիւթականի նուազ կարեւորութիւն, անյաջ ախորժակներու խաղաղեցում, ասոնք պէտք են տիրապետել որպէսզի մասամբ վերնայ կռիւը, ու մնայ կռիւը բարոյական մարզին, այսինքն դէպի բարին և կատարեալը մարդկանց կամ ազգերու ունեցած թրուիչքներուն գեղեցկութեան կամ արդիւնաւորութեան շարժառիթովը ու գլըրգլուովը, և այս անգամ կռիւը արիւնալից չ'պիտի ըլլայ, այլ պիտի ունենայ հոգեյան, մտաւոր բնոյթ։

Ըսինք այս ճշմարիտ երեւոյթները անոր համար որ սկաուտիզմը, այդ եղբայրացած մարդկութիւնն է որ կը հետապնդէ։

Նոխ՝ եղբայրակցութիւն ազգի մը անդամներուն միջև մանկական, պատանեկական տարիքէն և յետոյ նոյն ոգին տարբեր ազգերու սկաուտներուն միջև։

20րդ դարը մեծ պիտի ըլլայ և յիշատակելի եթէ կարենայ այս ուղղութեամբ գործ երեւան բերել, չեն պակասած հուժկու ծայներ որոնք սակայն արձագանգ չեն ունեցած և սակայն «ոչ մեկ բան կը կորսուի աշխարհի մեջ»։

Բարոյական, գաղափարի բարձրութիւն, ահա՛ թէ ի՞նչ կ'ուզէ հետապնդել սկաուտիզմը և թէ՛ ի՞նչ կարելի է սպասել անկէ։

ԸՆԴՀ. ՍԿԱՌԻՏ-ՊԵՏԸ ԿԸ ԽՕՍԻ

ՊԵՏԵՐՈՒՆ,

— Կ'ուզե՛ք յաջողիլ։

Ձեր շուրջ երջանկութիւն սփռեցէք և դուք ինքզինքնիդ երջանիկ պիտի զգաք։ Ձեր անձնական փառասիրութիւնը գործածեցէք ընդհանուրին շահին համար։ Ձեր ունեցածին համար երախտագէտ եղէք, և դիտեցէք կեանքի զուարթութիւնը, բնութեան հրաշալիքները, փառքերը և գեղեցկութիւնը։

— Մարդկութեան ամենալիս թերութիւնը նասիրտութիւնն է։

Ձեզ կը մնայ միայն մտածել «նախ ուրիշը վերջը ես»։

— Գուցե ջերմեռանդ կուսակից մըն

ե՛ք ձեր պահանջած ընկերային դասակարգին, դաւանանքին եւայլն։

Սկաուտական եղբայրակցութիւնը կ'անհետացնէ ամէն այսպիսի խտրութիւն։ Ձեր տղոց ապացուցէք թէ մարդիկ հաւասար են մեծ իտէալին առջև։

— Բարկութեան նուպայի մը մեջ առանց խորհելու աղոտ բառեր կ'արտասանե՛ք։

Ձանացէք սուրբ — և մոռնալ ամէն ի՞նչ։

(Վերջ)

ՌՈՊԷՐԹ ՊԵՏԸՆ ԲԱՌԻԷԼ

Մեր այն յարգոյ բաժանորդները որ կանոնաւորաբար թերթ չեն ստանար, դիմեն «Ջարթօնը» գրատունը զայն պահանջելու համար եւ կամ իմացնեն մեզ անմիջապէս։

Գրկին կը յայտարարենք թէ մեր ցրուիչն է «Ջարթօնը» գրատունը Առաջնորդարանի կից։

ԽՄԲԱԴՐՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՐՀԻ ՊՅՅ - ՍԿԱՌԻՏՆԵՐՈՒ Ը Ն Դ Հ . Թ Ի Ի Ը

(Ըստ Միջազգային Գրասենեակին վերջին տեղեկագրին, որուն մէջ տալուին չէ յիշուած 12 կազմա. կերպութեանց սկաուտներու թիւը)

Table with 4 columns: Country, Count, and others. Rows include Աւստրիա, Պելճիգայ, Հայաստան, Պրեզիլիա, Տանիմարիա, Բրիտանական Կայսրութիւն, Սպանիա, Էսթոնիա, Միացեալ Նահանգք, Ֆրանսա, Հոլանտա, Իսպիա, Լիթուանիա, Լիպերիա, Լիւսեմպուրկ, Նորվեգիա, Բոլոնիա, Բուրուկալ, Սերպիա, Շուէս, Զուիցերիա, Զեֆուլմարիա, Հունգարիա.

1,144,900

Աշխարհի վրայ գոյութիւն ունի 1 1/2 միլիոնէն աւելի սկաուտներ։ François Soutter

ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ՆԵՐՔԻՆ Շ Ա Ր Ժ Ո Ւ Մ

Մեծ ուրախութեամբ մեր մէջ ընդունեցինք մեր սկաուտ ընկերներէն Պրն. Զաւէն Սարունին, որ անցեալ տարի Արմաշի սկաուտներու հետ Հայաստան գացած էր հայրենի հողին վրայ կազմակերպելու այն գեղեցիկ շարժումը որուն նուիրուած ենք մենք Պր. Զաւէն, հազիւ 25 տարեկան, երիտասարդ խոստմնալից ուժ մը, օժտուած սկաուտական ճշմարիտ գաղափարներով ու հայրենասիրական վազգացումներով կարող է ըլլալ կորիզ ապագայ նոր ձեռնարկներու։

Արդէն ինք այդ մտօք իզմիր եկած ու անցեալ երկուշաբթի ալ Ագ-Հիւսի մեկնած է տեղւոյն մէջ կազմակերպելու սկաուտական խումբ մը։

Յաջողութիւն մաղթելով Հայ պոլսկաուտներու կազմակերպութեան կողմէ իր կատարած այս ջանքերուն, կը յուսանք որ Փոքր-Ասիոյ բոլոր հայ-

լատ քաղաքներուն մէջ ալ հեազե-
տէ կը ծաւալի այս շարժումը:

— Անցեալ Կիրակի, 26 Փետրվար,
առաւօտեան ժամը 10ին Գարաթաշի
«Բիլօր»-ի գաղտին վրայ տեղի ունե-
ցաւ Ֆուլթօլի մրցում մը Ա. Բանա-
կի սկաուտներու և տեղւոյն վարդան-
եան Միւլթեան խումբին միջև:

Երկու խումբերն ալ ոչինչով հա-
մասար հանդիսացան:

ՍԿԱՈՒՏԵՐ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՄԷՋ

ՁԵՔՕՍԼՈՎԱՔԻՈՅ ՄԷՋ

Ձէքօսլովաքիոյ սկաուտներու կապ-
ակիրացութեան գլուխը կը գտնուի
Երթինքն Հանրապետութեան նախա-
պահը M. T. G. Masaryk, որ իբր
ճշմարիտ ծեր սկաուտ մը կ'աշխատի
ներկայ պատանեկութենէն պատրաս-
տելու ապագայ քաղաքացին:

Այս երկրին մէջ կան 5000է աւելի
սկաուտներ. անցեալ տարի անոնք
կազմակերպեցին 530 բանակումներ:

ՄԻԱՅԵՆԱԼ ԼԱՀԱՆԳԱՅ ՄԷՋ

Ուաշինկթօնի Ձէնընկեցութեան Հա-
մաժողովը պաշտօնապէս ընդունեց ըս-
տաւանները իբր լրատու և Առաջին ան-
գամ ըլլալով ազգերու համաժողովի մը
խտիրու միջոցին փոխանակ սպա-
ռազինեալ զինուորներու, խաղաղու-
եան սկաուտներ կանգնած են իբր
բանակ:

Ընդհ. Պետը այս առթիւ շնորհա-
տարկան նամակ մը ուղղեց Ամերիկ-
եան սկաուտներու կազմակերպութեան:

ԱՌՈՂՋԱՊԱՅԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔ

ՍՈՆԵԳԵԼԵՆ

- 1) Ընդհանրապէս շատ կուտեն, մանաւանդ
մը մէջ:
- 2) Ընդհանրապէս շատ միւս կուտեն. որով
առաջ կուգայ հիւանդութիւններ, շատմոխի
ու ուղեղի խանգարում:
- 3) Ընդհանրապէս շատ շուտ կուտեն այնպէս
որ աստիճանը կը կատարէ ակոյսին ընելիս աշ-
խատելը:
- 4) Հաւաքոյն սննդեղեղներն են.
Բրինձը, ցորենը, չոր սիսեռը, կարը, կա-
պը եւ պակիրը. պտուղները, բանջարեղեղ-
ները, հաւկիթը, ձուկը (շափառ), վերջապէս
կար (սիւս ֆանակոթեամբ):

ԴԵՊ

- 1) Հաւաքոյն դեղերն են.
- 2) Բացդեայ կեանքը. (պատուհանը գիշեր
ու ցորեկ բաց):
- 3) Մարմնամաւրդը:
- 4) Յաճախակի շոգանկները:
- 5) Կանոնաւոր ապրելակերպ:
- 6) Մեր միջավայրին, աշխատութեան ու կե-
անքի շատ ունեղեղներ:
- 7) Հուարութիւն ու բարոյայի կեանք մը:

Պոյ-Սկաուտ

ՍԿԱՈՒՏԵՐԸ

ՈՒՍԵՆԿԻՑՈՒՆԻ ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ ՄԷՋ

Ձէնընկեցութեան Համաժողովը տա-
կաւին նոր սկսած՝ Անգլիական պատ-
ուիրակութիւնը պահանջեց որ գահի-
ճին մէջ կանգնած զինեալ պահակնե-
րը հեռանալով անոնց տեղ խաղաղու-
թեան խորհրդանիշը՝ սկաուտներ գան:

Ամերիկեան կառավարութիւնը շու-
տով ընդառաջ գնաց այս խիստ օգ-
տակար առաջարկին գործողութեան
ու սկաուտներ փոխանարգեցին զին-
ուորականներուն:

Խորհրդաժողովին առաջին օրերուն՝
Լօրս Ռիսեյ շտապաւ կ'ուղղուէր զէպի
միւս պատուիրակներուն գրասենեակը
երբ յանկարծ սկաուտական խմբակ մը
բարեւի կեցում: Լօրսը զարմացած ի
րեն եղած այս պատիւէն, սկաուտնե-
րուն հարցուց թէ ի՞նչպէս ճանչցան
զինքը այսքան բազմութեան մէջ. բա-
կառու պատասխանեց թէ իւրաքան-
չիւր սկաուտ որ պաշտօնի վրայ է
պարտաւոր է ճանչնալ պատուիրակ-
ները, և իր գրպանէն հանեց ցուցակ
մը ուր կար Լօրս Ռիսեյի և ուրիշ պատ-
ուիրակներու լուսանկարները:

Ընդհ. Պետ Մը. Ռօպէրթ Պէյտըն
Բառէլ-Ամերիկեան սկաուտներու կազ-
մակերպութեան ուղղած իր մէկ նա-
մակով կ'ըսէ. «Դուք ձեր վարմունքով
ցոյց տուիք բոլոր աշխարհի թէ իրօք
կարող էք զինապաշտութիւնը փոխա-
նորդել խաղաղութեամբ և այս առ-
թիւ դուք ու ձեր կառավարութիւնը
արժանի է ամէն շնորհաւորութեան:

ՎԱՀՐԱՄ ԳՊՐԶԼԵԱՆ

Բասաժ Գույումեան քիւ 38
(Ֆրանկաց Թաղ)



Կը պատրաստէ նուրը և յստակ փո-
րագրութիւններ, վաճառականական
կնիքներ, քլիշէներ, անտէնաներ, մօ-
նօկրամներ և այլն:

Կը պատրաստէ ամէն կերպ ոսկեղէն և
արծաթեղէն գործեր, նուրը և ճաշա-
կաւոր:

Վաճառատան մէջ կը գտնուին նա-
և ֆրիսքալ ակնոցներ այլազան տե-
սակներով, փիւմէ պլու և այլն:

Ապսպրանքներ՝ Խնամեա՛լ
Գիներ՝ Խիստ անժա՛ն

ՖՈՒԹ ՊՕԼԻՍՏԻՆ ՍԻՆԱԿԸ

(Մասնագիտական հարցումներ պատաս-
խանուած Պր. Մ. Կանրգեանի)

Հ.— (Յ. Տ.) Ի՞նչ բաներ պէտք է ընէ իրա-
ւարար:

Պ.— 1) Գողմնակցութիւն, 2) վիճարակի խա-
ղացողներու հետ ունէր որոշման մասին,
3) վիճարակի օրէնքի մասին մրցումե
վերջ, 4) խաղացողներու ուսին վրայ ձեռք
դնել զինք սաստիկ միջոցին:

Հ.— Կօշիկը եւ հագուստը կ'ազդե՞ն խաղին:

Պ.— Անշուշտ. Խաղացողները պէտք են լաւ եւ
շափաւոր կօշիկներ եւ հանդարտ հա-
գուսնէր կրեն: Կօշիկները պէտք էն մեղ
եւ կամ շուք ըլլալ, իսկ կօշիկի կապը
երկար եւ պէտք է ոսկի վրայ ամրացնել
առանց սեղմելու:

Հ.— (Սարգիս) Ի՞նչ պէտք է ընէ իրաւարարը,
երբ տղայ մը իր կօշին մօտիկը հակառա-
կորդի մը դիտմամբ կից կուտայ:

Պ.— Եթէ զարմոյշ մնալ դուրս վարելու է ե
յետոյ բէնըլթի քիթ շնորհելու՝ միւս խում-
բին:

Հ.— (Ջաւէն) Ո՞ր պարագաներու ներքեւ խա-
ղացող մը օջ սաչ չկրնար ըլլալ:

Պ.— 1) Երբ գնդակը կօշին կը զարնուի, 2)
բօրնըր քիթի միջոցին, 3) սանձամագը-
ծէն մեռնած միջոցին, 4) եթէ գնդակը
հակառակորդ խաղացողի մը դպած է, 5)
եթէ խաղացողը դաշտի կեսին մէջ կը
գտնուի եւ 6) եթէ իմ գնդակը ունեցող
տղան հետ մէկ գծի վրայ կամ անկից ետէ:

Հ.— (Ջ. Ա.) Գօրնըր ֆիլի միջոցին զարմոյշ
ֆօրնըրի դրօշակը կը հանէ դիւրացնելու
համար իր հարուածը. արտօնուած է այս:

Պ.— Ո՛ր իրաւարարը եւ մեղիսկ հակառա-
կորդ խաղացողները պէտք են ընդիմադր
առն:

Հ.— (Ջաւէն) Ֆուլթօլի հանդիսականները կըր-
նա՞ն միջամտել մրցման մը եւ զայն
խանգարելու ջանալ. ինչպէս պատահեալ
անցեալ մրցման Արօլլօնի դաշտը:

Պ.— Հանդիսականները մեծապէս դուրսապար-
տել են միջամտած ըլլալուն համար:
Ժողովուրդին մոլեռանդութիւնը եւ խա-
ղին օրէնքներու սգիտութիւնը կրնայ մի
միայն պատճառ ըլլալ խանգարելու ունէ
Խաղ: Իսկ ինչ պատահեալ Արօլլօնի
դաշտը, այդ արդէն անուր դէպք մըն
էր, որուն համար բազմաթիւ ցուակ-
ցութիւններ յայտնուեցան:

Հ.— (Մկրտիչ) Եթէ խումբ մը հեռանայ մըր-
ցումէն, կրնա՞յ օրինական առաքիւն Թիւն-
ներ ներկայացնել մրցման ջնջումին համար:

Պ.— Ո՛ր Ունէ խումբ պատճառ է մրցումը
լրացնել եւ յետոյ մերկայացնել գրաւորա-
պէս իր անարկութիւնները, որոնք ֆուլթ-
օլի յանձնախումբին կողմէ նկատի առ-
նուելով՝ աւարտ վճիռը կը տրուի: Խումբ
ի մը դաշտէն հեռանալը արդէն
Ֆուլթօլի օրէնքներու բացարձակ
ամսաստում ընել է, որով օրինազանց
խումբի մը օրէնքի դիմաւոր ինքնին
ծիծաղալար է, չէ՞:

Հ.— (Ջաւէն) Խաղացող տղայք պէ՞տք է վի-
ճարանին հանդիսականներու հետ ունէ
առարկելի խնդրոյ մը շուրջ:

Պ.— Երբե՛ք, ընդհակառակը պէտք է ոչ մէկ
խօսք ընեն, այլ հանդարտ մնան, միմյնե
որ իրաւարարի առջիկը զիտեմ կրկին
խաղի հրաւիրէ: Այս իմ ամենացեղմ
յանձնաւարտութիւնս է:



ՄԱՐԶԱՇԻԱՐԶ

Առողջ միտք՝ առողջ մարմնի մեջ



«ՊԱՏՐԱՍ»-ի ՊԱՐԳԵԻ թիւ 1

ՖՈՒԹՊՕԼԻ ՄԵԾ ՄՐՑՈՒՄ ՀԱՅ ԱԿՈՒՄԲ-ԱԲՕԼԼՕՆ (ՄԱՐՏ 12)

ԿՏՐՈՆ

1. — Ո՞ր խումբը պիտի շահի
2. — Յաղթականը քանի՞ կոլ պիտի բնէ
3. — Կոլերը առաջին քէ երկրորդ հաժ-թայմին պիտի բլան
4. — Ի՞նչ եղանակաւ կոլ պիտի բլայ (Բենըրթի, Բորնըր, ուղիղ հարուած քէ պարզ փրի-փիֆ
5. — Ո՞ր խաղացողներու կողմանէ կոլ պիտի բլայ

Ստորագր.

ՊԱՅՄԱՆՆԵՐ — Բոլոր պատասխանները պէժ է գրուին մելանով եւ «ՊԱՏՐԱՍ»-ի կտրոններու վրայ:

Առաջին շաբաթը պիտի ստանայ ՀՈՒՍԱՆԿԱՐԻ ԳՕՏԱՔ մը:

Երկրորդ շաբաթը՝ ԻՆՔՆԱՀՈՍ ԳՐԻԶ մը:

Եթէ ոչ մէկ պատասխան ճշգրիտ ելլէ, մօտաւորագոյն պատասխանը պիտի ստանայ ՇԲԵՂ ՉՐԵԼԻ մը, եւ ԹՂԹԱՊԱՆԱԿ մը:

Ոչ մէկ լուծում նկատի պիտի առնուի եթէ «ՊԱՏՐԱՍ»-ի ԿՏՐՈՆներու վրայ գրուած չէ: Պատասխանները պէժ է դրկուին խմբագրութեան մինչեւ Մարտ 11: Խմբագրութեան որոշումը վերջնական է:

ՖՈՒԹՊՕԼԸ ՄԵՐ ՄԷՋ

ԱՆՑՆԱԼ ԿԻՐԱԿԻ ԲՂՄԿԱՐԱՐ ՄՐՑՈՒՄԸ

ՍԲՕՐԹՄԷՆԻ ՈՂԻ ԶԻԿԱՑ ԻԶՄԻՐԻ ՄԷՋ. . .

Անցեալ կիրակի, 26 փետրվար, կէսօրէ վերջ ժամը ճիշդ 3 30ին Արօլլօնի դաշտին վրայ տեղի ունեցաւ «Արօլլօն» գաւաթի վերջին կարեւոր մրցումներէն մէկը Հայկական և Բանիօս խումբերուն միջև:

Պաշտօնական իրաւարարն էր Մր. Ուիթիլ, բայց անոր բացակայութեան պատճառաւ երկու խմբապետներու համաձայնութեամբ իրաւարար ընտրուեցաւ Պ. Մ. Եանըգեան:

Խաղը բոլորն կատարութեամբ կը շարունակուէր, և Հայկական խումբը փառաւոր ու օրինաւոր կօլեր կը շահէր, մինչ «Արօլլօն»-ի անդամները Յոյն ներկայ հասարակութեան մէջ տարտղնուած՝ կը գրգռէին զինք հայ խաղացողներու դէմ: Եւ հայ իրաւարարին դէմ՝ յարձակումներ կատարելու:

Յաջորդական բոլոր անհանդի դէպքերը, ժողովրդային անսեղի յարձակումներն ու դէպի դատ խուժումները մանաւանդ երբ անոնք կը կատարուին յետին մտածումներու ազդեցութեան տակ բացարձակապէս կը մասնեն նրամարիտ ՍԲՕՐԹՄԷՆԻ ոգւոյն պա-

կասը Իգմիրի Յոյն ժողովուրդին մէջ:

Առաջին հաժ-թայմը Հայկական խումբին 3 կօլերովը վերջացած՝ ու երկրորդը սկսած էր երբ Բանիօսիօսը կօլ մը շահեցաւ որուն յաջորդեց Հայկական կօլ մը: Սակայն Յոյն խաղացողները քաջալերուած փորձերէն՝ այդ վերջին կօլը «օֆսայտ» առարկելով, բողոքողի կեղծ պիտակին տակ հեռացան դատէն, այլևս չ'կարողանալով հանդուրժել իրենց այս սոսկալի պարտութեան, մինչ ներկաները դէպի Հայ խաղացողները կը խուժէին կարծես անոնցմէ վրէժ? լուծելու համար. . .

Հայկական խումբը յաղթական է 1ի դիմ 4 կօլով, ու այդ 4 կօլերը ճշմարիտ ու օրինաւոր կօլեր են:

Գովելի է Հայ ներկայ հասարակութիւնը որ մինչ վերջ կարողացաւ պահել իր պաշարելութիւնը ամէն մէկ ստորին յարձակումի դէմ և յուսալի է որ պիտի շարունակէ պահել յառաջիկայ Մեծ Մրցման պահուն, գեղեցիկ դաս մը տալու համար դրացի օտար ազգերուն եւ այս պէս ապացուցանելով որ Հայք իր մէջ կը պահեն ճշմարիտ Սբօրթ մէկի ոգի:

ԳԱԽԱԹԻ ՎԵՐՋԻՆ ԱՄԵՆԱՄԵԾ ՄՐՑՈՒՄԸ

ՅԱԶԹԱՆԱԿ ԿԱՐ ՊԱՐՏՈՒԹԻՒՆ

Յառաջիկայ կիրակի, Մարտ 12, կէսօրէ վերջ ժամը ճիշդ 3ին Բունդայի Բանիօսիօսի դատարան վրայ տեղի պիտի ունենայ «Արօլլօն» գաւաթի վերջին ամենամեծ ու վնասական մրցումը Հայկական եւ Արօլլօն խումբերուն միջև:

Երկու խումբերն ալ կը ներկայանան հաւասար ճիշտութեամբ: Յաղթականը պիտի շահի գաւաթը: Իրաւարարն է Մր. Քաուլեր:

ՏՊԱՂ. ԿԵՇԵՆՆԱՆ